

ՄՈՎՍԵՍ ԿԱՂԱՆԿԱՏՎԱՑՈՒ «ԱՂՎԱՆԻՑ ԱՇԽԱՐՀԻ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ» ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ

2. Ս. ՍՎԱՉՅԱՆ

Միջնադարյան հայ պատմիչ Մովսես Կաղանկատվացու «Պատմութիւն Աղուանից աշխարհի» աշխատության վերաբերյալ հիշատակությունները հասնում են մինչև X դարի կեսերը, մինչև Անանիա Մոկացի կաթողիկոսի ապրած ժամանակաշրջանը: Հենց այս հեղինակն էլ հաղորդում է Կաղանկատվացու գործի վերաբերյալ առաջին տեղեկությունը:

Բայց չնայած դրան, աշխատության նկատմամբ հետաքրքրություն առաջացավ միայն ինը դար անց՝ XIX դարի սկզբներին, այն բանից հետո, երբ ֆրանսիացի հայագետ Ե. Բորեն 1838 թ. էջմիածնում, Հովհ. Շահխաթունյանցի միջոցով ծանոթացավ «Աղվանից աշխարհի պատմության» ձեռագրի հետ և, վերադառնալով Փարիզ, տվեց այս աշխատության մասին առաջին տեղեկությունները և նրանից ինչ-ինչ մասեր թարգմանելով գիտական շրջանառության մեջ դրեց¹: Գրքի ճանաչում ստանալու հետ մեկտեղ սկսվեց նրա ուսումնասիրությունը: Ուսումնասիրողներին հետաքրքրում էին և՛ աշխատության հեղինակի անձնավորությունը², և՛ գրության թվականը, և՛ լեզուն³, և՛ ձեռագրերը, և թե՛ աղբյուրները:

* * *

«Աղվանից աշխարհի պատմության» հեղինակը պարզ գիտակցել է, որ «որքան պայծառ է երկինք աստեղօք և երկիրս բուսով, այնպես է և ջանք աշխարհագիր պատմողի՝ յայլոց նիւթոց պարազարդի»⁴: Եվ նա, իրոք «պարազարդում» է իր պատմական աշխատությունը «յայլոց նիւթոց» չնայած միշտ

¹ Moïse Kaghankatsoi, Aghovans des origines Traduite du manuscrit armenien, par E. Boré avec des annotations de Viven de Saint-Martin, Univers. catholique Journal de l'Institut sc. hist., t. XXII, Paris, 1847, № 136, novembre.

² Կաղանկատվացու անձնավորության մասին գիտության մեջ տեղ են գտել զանազան ոչ իշտ ենթադրություններ. մեկ նրան անվանել են «աղվանական պատմիչ» (տե՛ս Կ. В. Тревер, Очерки по истории и культуре Кавказской Албании IV в. до н. э.— VII в. н. э. М.—Л., 1959, էջ 4, 182, 188, 190, 191, 200, 209, 210, 215—217, 223, 226, 229, 231, 234, 243, 244, 246, 249, 252, 285, 295, 304, 313), մեկ՝ «աղվանական տարեգիր» (Յ. И. Ямпольский, К изучению Летописи Кавказской Албании, «Известия» АН Азерб. ССР, Баку, 1957, № 9, էջ 151) կամ էլ ուղղակի հայտարարել են. «Մեր կարծիքով ճիշտ չէ մի շարք գիտնականների «խոր համոզմունքը» թե Մ. Կաղանկատվացին հայ պատմիչ էր» (Յ. И. Буннятов, Азербайджан в VII—IX вв., Баку, 1965, էջ 97):

³ Այս հարցում արտահայտվել է գիտության հետ ոչ մի առնչություն չունեցող այնպիսի կարծիք, ըստ որի «Աղվանից աշխարհի պատմությունը» գրված է եղել զարգարերեն լեզվով և ապա թարգմանվել գրաբար (Յ. Ямпольский, նշվ. աշխ., էջ 154). Իսկ բնագիրը ոչնչացվել է (Յ. И. Буннятов, նշվ. աշխ., էջ 97):

⁴ «Մովսեսի Կաղանկատվացու Պատմութիւն Աղուանից աշխարհի», Թիֆլիս, 1912, գիրք I, գլ. Ա:

չէ, որ նշում է այդ մասին: Պատմիչի փոխարեն այդ գործը իրենց վրա հն վերցրել ուսումնասիրողները:

«Աղվանից աշխարհի պատմության» աղբյուրները ցույց են տրվել դեռևս անցյալ դարի 60-ական թթ. մեծանուն հայագետ Ք. Պատկանյանի կողմից, որը նաև աշխատության ուսերեն թարգմանության հեղինակն է⁵: Դրքի թարգմանությունը, որը լույս տեսավ համարյա նրա հայերեն առաջին տպագրության հետ միաժամանակ⁶, ունի առաջաբան և հավելվածներ: Առաջաբանում թարգմանիչը մեկ առ մեկ թվարկում է աշխատության առաջին երկու գրքերի գլուխները ու սահմանափակվում միայն նշելով նրանց աղբյուրները:

Նման ձևով է նշել աղբյուրները նաև անգլիացի հայագետ Չ. Դաուսեթը: 1961 թ. նրա թարգմանությամբ լույս տեսավ «Պատմության» անգլերեն համեմատական քննադատական տեքստը⁷, ընդարձակ առաջաբանով ու գիտական մեծ արժեք ներկայացնող ծանոթագրություններով: Ծանոթագրություններում համարյա յուրաքանչյուր գլխի համար հնարավորության սահմաններում նըշվում են այդ գլխի աղբյուրները:

«Աղվանից աշխարհի պատմության» աղբյուրների և ընդհանրապես աշխատության հիմնական քննությամբ հանդես է եկել Ն. Ակինյանը: Վիեննայում լույս տեսնող «Հանդես Ամսօրյա» հայագիտական ուսումնաթերթի էջերում 1953 թ. սկսած մինչև 1959 թ. անվանի հայագետը պարբերաբար տպագրում էր ուսումնասիրություններ այդ աշխատության մասին⁸: Սակայն պետք է ասել, որ նա ևս իր ուսումնասիրություններում բավարարվել է միայն որոշ քանակի աղբյուրներ ցույց տալով: Ավելացնենք նաև, որ Ն. Ակինյանի ուսումնասիրության համաձայն Կաղանկատվացու մոտ հիշատակվող աղբյուրների մեծ մասը կեղծիք է և խարդախված խմբագրի, այն է՝ Կաղանկատվացու կողմից, որը չի համապատասխանում իրականությանը:

Աղվանից աշխարհի ամենահեղինակավոր հետազոտողներից մեկը՝ Կ. Վ. Տրեվերը ևս խոսում է «Պատմության» աղբյուրների մասին, և չնայած նա չի թվարկում աղբյուրները, բայց և այնպես Աղվանից աշխարհի պատմիչի օգտագործած «յայլոց նիթերը» դասակարգում է չորս խմբի մեջ. «1. ժողովրդական պատումներ ու ավանդություններ (Աղվանից թագավոր Վաչագան Դ-ի մասին), 2. պաշտոնական բնույթի ուղերձներ և հոգևորական ու աշխարհիկ անձանց նամակագրություն, 3. IV—VI դդ. հայ պատմիչների աշխատություններ և 4. տեղեկություններ այնպիսի դեպքերի մասին, որոնց ինքը՝ հեղինակը կամ ականատես է եղել և կամ ժամանակակից»⁹: Ընդունելով այս դասակարգման պայմանականությունը, մենք ևս պահպանում ենք նույն կարգը և ըստ այնմ էլ անցնում Կաղանկատվացու աղբյուրների վերլուծմանը:

⁵ «История агван Мойсея Каганкатваци писателя X века», СПб, 1861.

⁶ Հայերեն առաջին տպագրությունը եղավ 1860 թ. Մոսկվայում:

⁷ C. J. F. Dowsett, The history of the Caucasian Albanians by Movses Dasxurancı, New York, 1961: Խնդրի նման համեմատական-քննադատական տեքստի հրատարակման անհրաժեշտությունը վաղուց է զգացվում:

⁸ Ն. Ակինյան, Մովսես Դոսխուրյանցի (Կոչված Կաղանկատվացի) և իր Պատմություն Աղվանից, «Հանդես Ամսօրյա», Վիեննա, 1953, էջ 1—32, 161—175, 321—349, 522—595. 1954, էջ 471—496. 1955, էջ 309—329. 1957, էջ 381—406, 525—536. 1958, էջ 149—151. 1959, էջ 110—132:

⁹ K. B. Trever, նշվ. աշխ., էջ 15—16:

Եվ այսպես, մի երկու խոսք Աղվանից թագավոր Վաչագան Գ-ին վերաբերող ժողովրդական ավանդապատումների մասին:

Աղվանից թագավոր Վաչագան Գ-ի և նրա գործած ժամանակաշրջանի մասին այսպիսի կարծիք կա. «Այն ամենը, ինչ որ կպատմվի Աղվանից Պատմության մեջ լայնորեն՝ վիպական նկարագիր կկրէ: Չեմ գտներ հոն պատմական կորիզ»¹⁰: Ն. Ակինյանի այս կարծիքը հնչում է շափազանց խիստ: Չէր կարող պատահել, որ այն ամենը ինչ պատմվում է Վաչագան Գ-ի մասին, շունենար իր պատմական հիմքը: Քաղաքական, շինարարական, մշակութային բնագավառում նրա եռանդուն գործունեությունը բացառում է նման ենթադրությունը: Այդ կնշանակեր ժխտել Վաչագան Բարեպաշտի, որպես թագավորի, գոյությունը, որի համար սակայն, մենք հիմք չունենք և, որն այնուամենայնիվ անում է Ակինյանը¹¹:

Վաչագան Գ-ի վարքում տեղ են գտել մի շարք ավանդություններ: Կաղանկատվացին, որպես բրիստոնյա պատմիչ, հիմնականում նրան է վերագրում սրբերի նշխարների գյուտերը, չձանձրանալով այդ գյուտերի պատմություններին նվիրել նույնիսկ ամբողջական գլուխներ՝ «Յայտնութիւն նըշխարաց սրբոյն Զաքարիայի հօրն Յովհաննու և երանելոյն Պանդալենի...»¹², «Գիւտ նշխարաց սրբոյն Գրիգորիսի...»¹³. «Յայտարարութիւն վկայելոցն ի Դիզափայտ լերինն և երևումն նշխարացն...»¹⁴ և այլն: Եվ պետք է նշել, որ այս բոլոր սրբերի ու նահատակների մասունքների հայտնագործման մասին գլուխները պատմիչը քաղել է Քրիստոսի նահատակների վարքը բովանդակող եկեղեցական գրականությունից, որը հետագայում հավաքել և հրատարակել է Մկրտիչ Ավգերյանը «Լիակատար վարք և վկայաբանութիւն սրբոց» վերնագրով: Դրանում դժվար չէ համոզվել առաջին իսկ օրինակով.

«Վարք սրբոց»

Սա... (Վաչագան Բարեպաշտը— Հ. Մ.): Մեծապես տենչանօք ցանկացաւ գտանել զնշխարս լուսաւորչին աղուանից սրբոյն Գրիգորիսի առաջին կաթողիկոսի աղուանից... Այդ թէպէտև տեղեկացեալ գիտէր արքայ գրաւոր և անգիր աւանդութեամբ, թե յետ կատարման սրբոյ Գրիգորիսի ի վատնեան կամ ի վատնիանիան դաշտի յեզր Կասպից ծովուն՝ աշակերտք նորա բերին և թաղեցին զմարմինն նորա ի փոքր սինիս յամարաս գիւղն մօտ յեկեղեցին հիմնարկեալ ի մեծին Գրիգորէ լուսաւորչէ և զարդարեալ ի նմին Գրիգո-

Կաղանկատվացի

Յոյժ ցանկալի տենչանս ուներ բարեպաշտ Վաչագան արքայն Աղուանից առ գիւտ նշխարաց սրբոց մանկանն Գրիգորիսի քանզի՝ տեղեկացել էր հնագրացն պատմութենէ, եթե ի վատնեայ դաշտին կատարեցաւ երանելին Գրիգորիս, և բարձեալ աշակերտաց ոմանց՝ բերին յԱմարաս գիւղն և եդին յեկեղեցւոջն, յորում հիմնարկեալ էր մեծին Գրիգորի՝ ոչ նշան ինչ արարեալ ի տեղւոջն, երկուցեալ յայլուրեք բառնալոյ զնշխարս երանելոյն, կամ թէ յերկիւղէ հինին ճեպելոյ, և ի յոլովութենէ ամաց բազմանալոյ՝ մոռացումն

10 Ն. Ակինյան, նշվ. աշխ., էջ 553:

11 Նույն տեղում, էջ 554:

12 Կաղանկատվացի, գիրք Ա, գլ. ԺԹ:

13 Նույն տեղում, գիրք Ա, գլ. Դ:

14 Նույն տեղում, գիրք Բ, գլ. Ե:

ըիսէ, բայց կամ նորին իսկ՝ որք թաղեցին աննշան արարեալ էին զտեղին, զի մի բարձցի յօտարաց, և մի ոտնակոխ լիցի հինից, և կամ ի բաղմութենէ ամաց անցելոց անյայտ իմն եղեալ էր։ Ապա խորհուրդ կալեալ թագաւորին ընդ իւրոյ դրան երիցունս՝ հնարս ինչ գտանել վասն գիտի խընդրոյն, որում էրն ցանկացող, կոչեաց զվանաց երէց զեղջն ամարասայ, և հարցանէր՝ թէ կա՞յ ինչ նշան գերեզմանք ուրուք առ եկեղեցեան։ Եւ նա ասէ. յոլով են գերեզմանք մերձ յեկեղեցին, բայց տեղին է աւերակ ոտնակոխ լեալ յերեսաց հինախաղաց ժամանակին։ Յայնժամ խորհեցավ աստուածասէր թագաւորն, և ասէ. եթէ զհող տեղեացն ի բաց հրամայեմ պեղել գուցե տակավին ոչ գտանի մարմին սրբոյն ի բաղմութենէ գերեզմանացն. այլ պարտ և արժան է ապաստան լինել յաղօթս և ի պահս, և հայցել միաբան յամենողորմն աստուծոյ...¹⁵

ընկեցեալ լիներ տեղին նշխարաց սըրբոցն։ Խորհուրդ կալեալ թագաւորին, ընդ իւրոյ դրան երիցուն, խորհել պատճառս ինչ, որով կարասցէ գտանել զցանկալին յոյժ բարի անձինն։

Եւ կոչեցեալ զվանացերէց զեղջն հարցանէր, եթէ նշան ինչ ուրեք է՝ առ եկեղեցեան ի գերեզմանին վերայ՝ թէ ոչ. և նա ասէ՝ «բաղում գերեզմանք են արդ շուրջ եկեղեցեան վասն զի ի հինախաղաց ժամանակէն ի մեծագույն հիմնարկութենէ եկեղեցւոյն ոչ ոք կարաց շինել, զոր մեծին Դրիգորի հիմնարկեալ էր»։ Եւ ասէ թագաւորն թէ «Զհող տեղւոյն ի բաց հրամայեմ պեղել, գուցէ բաղմութենէ գերեզմանաց ոչ կարեմք զալ ի վերայ գերեզմանի երանելոյն այլ ապաստան պարտ է լինիլ ի պահս և յաղօթս, և բաղում աղաչանօք խնդրել յամենողորմէն Աստուծոյ...»¹⁶

Այստեղ մենք վերջակետ ենք դնում, հակառակ դեպքում ստիպված կլինենք արտագրել ամբողջական գլուխներ։ Այդ ավելորդությունից խուսափելու համար ուղղակի նշենք այն էջերն ու գլուխները, որոնք ունեն բառական նմանություններ։ Այսպես, Կաղանկատվացու «Պատմության» Ա գրքի ԻԱ գլուխը գտնում ենք «Վարք սրբոցի» է հատորի 7—13 էջերում, ապա շարունակաբար, չնչին տարբերություններով, ԻԲ գլուխը՝ 13—15, իսկ ԻԳ գլուխը՝ 15—21 էջերում¹⁷։

Կաղանկատվացին Վաչագան Բարեպաշտի աստվածահաճո գործունեությունը ավելացնում է ևս մեկը. «Բսկ յետ բաղում ժամանակաց բարեպաշտն Վաչական Աղուանից արքայ կանգնեաց զսին ի գբի նահատակութեանն (Եղիշեի—Հ. Ս.), և սենեկապանն արքայի մենակեաց եղեալ ի վերայ սեանն կատարի»¹⁸։ Վաչագան Բարեպաշտին օժտելով քրիստոնյային ու թագավորին վալել իր ժամանակի հասկացողությամբ լավագույն հատկություններով, մէր պատմիչը իր շարունակողին հնարավորություն է տվել աշխատությունում օգ-

¹⁵ Մ. Ավագյան, Լիակատար վարք... սրբոց, հատ. է, Վենետիկ, 1813, էջ 5—7։

¹⁶ Կաղանկատվացի, գիրք Ա, գլ. Ի։

¹⁷ Ի լրացումն նշենք նաև, որ ուսումնասիրվող «Պատմության» Ա գրքի Զ գլուխը, ուր նկարագրված է Թադևոս Առաքյալի քարոզչությունն ու հայոց Սանատրուկ թագավորի կողմից Արտազ զավառում նահատակվելը, կարելի է գտնել՝ Մ. Ավագյան, Լիակատար վարք... սրբոց, հատ. Դ, Վենետիկ, 1813, էջ 14—20, իսկ Զաքարիայի և Պանտալեոնի մասունքների բլուրը (Կաղանկատվացի, գիրք Ա, գլուխ ԺԹ)՝ «Վարքի» Ե հատորի էջ 376-ում։

¹⁸ Կաղանկատվացի, գիրք Ա, գլուխ է։

տագործելու ժողովրդական այն ավանդությունը, թե Վաչագան Բարեպաշտը շինել է տվել տարվա օրերի թվով, այսինքն 365—366 եկեղեցի. «Ըստ թուոց աուոց տարւոյն եկեղեցիս միայն բարեպաշտն Վաչական շինեաց յԱրևելս»¹⁹:

Հաջորդ տիպի աղբյուրները Կաղանկատվացու համար եղել են, ըստ Կ. Վ. Տրևերի, պալատական և վանքերի արխիվներում պահպանված պաշտոնական բնույթի ուղերձները և հոգևորական ու աշխարհիկ անձանց նամակները, որոնց թիվը «Պատմության» մեջ հասնում է քսանի:

Կաղանկատվացու մոտ (գիրք Ա, գլ. ԺԱ) մի երկարաշունչ գլուխ է կազմում Հայոց Գյուտ կաթողիկոսի (461—476 թթ.) նամակը՝ ուղղված Աղվանից թագավոր Վաչեին, նամակ, որը Չ. Դաուսեթը համարում է «Հայ գրականության հելլենիստական դպրության արդյունք»²⁰:

Ուսումնասիրվող «Պատմության» մեջ հաճախ է հիշատակվում Մատթե երեց անունով «գիտնաւոր» մականվանյալ հոգևորականը, իսկ Ա. գրքի ի՛ի գլուխը նրա՝ Վաչագան Բարեպաշտի հարցմունքների պատասխան—նամակն է: Հաջորդ գլուխը ևս նամակ է և գարձյալ ուղղված է Վաչագան Բարեպաշտին: Այս նամակի հեղինակն արդեն Աբրահամ եպիսկոպոս Մամիկոնյանն է, որը բործում էր Տարոն գավառում V դարի վերջերին²¹: Գրքում զետեղված են նաև հոնաց իշխանի նամակը առ հայոց Սահակ Գ Ձորափորեցի կաթողիկոսը (678—703) և Գրիգոր Մամիկոնյան իշխանը (661—682) ու վերջիններիս պատասխանը²²:

Կաղանկատվացու աշխատության մեջ օգտագործված նամակների մի մասը ընդգրկված է «Գիրք թղթոցում» և «ասկե հանված են Բ. 7 (թուղթ Յովհաննիսի հայոց կաթողիկոսի առ տեր Աբաս Աղվանից կաթուղիկոս), Բ. 49 (պատասխանի թղթոյն Մխիթարայ Ամարասայ եպիսկոպոսի ի հայոց) և Բ. 47 (հատված մը Աբրահամ կաթողիկոսի Շրջաբերականեն)»²³:

Նշված բոլոր գլուխների զուգահեռ քննարկումը կարող է ձանձրալի լինել, ուստի և այս երկու աշխատությունների նմանությունը ցույց կտանք մի գլխի օրինակով: Այդ նպատակի համար հարմար ենք գտնում Հայոց Աբրահամ Ա Աղբաթանեցի կաթողիկոսի (607—615) Շրջաբերականի հատվածը, ուր խոսքը գնում է հայոց և վրաց եկեղեցիների բաժանման մասին 608 թ.:

«Դիւբ քղքոց»

Կաղանկատվացի

... զնոյն ի վերայ Վրաց հրամայեցաք, ամենեւիմք մի հաղորդել ընդ նոսա, մի յաղաթս և մի ի կերակուրս, և մի յըմպելիս, մի ի բարեկամութիւն, մի ի դայեկութիւն, մի աղաւթիւր երթալով ի խաչն, որ ի Մցխիթայի տեղաւրն համարի մի ի Մանգղեաց

... և զնոյն ի վերայ Վրաց հրամայեցաք՝ ամենեւին մի հաղորդիլ ընդ նոսա՝ մի յաղօթս, մի ի կերակուրս, մի յըմպելիս, մի ի բարեկամութիւնս, մի ի դայեկութիւնս, մի յաղօթըս երթալ ի խաչն, որ Մցխիթայի տեղեօքն համբաւի, մի ի Մանգլեաց խաչն,

¹⁹ Նույն տեղում, գիրք Գ, գլուխ ի՞ի:

²⁰ C. J. F. Dowsett. Նշվ. աշխ., էջ 14, ծան. 4:

²¹ Կաղանկատվացի, գիրք Ա, գլ. ԻԵ: Տե՛ս նաև Հր. Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, հատ. Ա, Երևան, 1942, էջ 29—30:

²² Կաղանկատվացի, գիրք Բ, գլ. ԽԳ, ԽԵ:

²³ Ն. Ակինյան, Նշվ. աշխ., էջ 165:

խաշն և մի ի մեր եկեղեցիս զնոսա ընդունել. այլև ամուսնութեամբ ամենեմբ հեռանալ, բայց միայն զնել ինչ, և կամ զնոյ տալ որպես հրէից:.... Ապա թե՛ անխրատաբար վարեսցի որ հաղորդելով ընդ նոսա և կամակից լիցին պղծութեան հաւատոց նոցա, այնպիսիքն նդովեսցին հոգւոյ, նդովեսցին մարմնով և ամենայն կենցաղով իւրեանց, և որոշեսցին ի սրբոյ եկեղեցւոյ Աստուծոյ և եղիցին խաւարաբնակք և յաւիտենից հրոյն կերակուր: Իսկ եթէ որ ամբարտաւանեսցէ այնպիսին զի չևտ հոգևոր պատուհասի, և ցմարմնավորս պատրաստեմք ի վերայ ածել²⁴:

մի ի մեր եկեղեցիս զնոսա ընդունել. այլև ամուսնութեամբ ամենեմբ հեռանալ, միայն զնել ինչ, կամ զնոց տալ՝ որպէս հրէից: Արդ որ ոք անխտրաբար հաղորդեսցի կամակից լինելով անհաւատութեան նոցա, նդովեսցի հոգւով և մարմնով, և ամենայն կենցաղով իւրով որոշեսցի յեկեղեցւոյն Աստուծոյ. և եղիցին խաւարաբնակ և յաւիտենից հրոյն կերակուր, որ զհրամանս ղայս արհամարհեսցեն²⁵:

Կաղանկատվացու աղբյուրներից է Մաքենոցաց վանքի վանահայր Սողոմոնի թուղթը²⁶. Ստ. Օրբելյանը այս վերջինիս ծանոթանում և իր «Պատմության» մեջ օգտագործում է Կաղանկատվացու շնորհիվ:

Բյուղանդական, Հայոց, Վրաց, Աղվանից եկեղեցիների միջև եղած դավանաբանական վեճերի մասին խոսելիս (ի դեպ, Կաղանկատվացին էլ նույն նպատակով է օգտագործել Սողոմոնի թուղթը) Մյունխաց տան պատմիչը հայտնում է. «Զորոյ (դավանաբանական վիճաբանության— Հ. Ս.) զորպիսութիւն անցիցն և զպատճառս բանիցն... բացահայտեցից սակաւութ, որպես հաւաստի ուսաք ի սրբոյն Ուխտանեսէ՝ Սեբաստացւոց եպիսկոպոսէ, և ի սրբոյն Սաղօմօնի՝ Մաքենոցաց առաջնորդի թղթոյն, որ կարգեալ է յԱղուանից Պատմութեանն ի միջին հատորն, և ի սրբոյն Մաշտոցի թղթոյն...»²⁷:

Վերոհիշյալ աղբյուրներից բացի, ինչ խոսք, որ առանձին կարևորութիւն ունեն IV—VI դարերի հայ պատմիչների աշխատութիւնները: «Աղվանից կողմանց» պատմիչը իր երկը գրելիս (խոսքը վերաբերում է «Պատմության» Ա և Բ գրքերին) հաճախ է դիմել հայոց պատմիչներին՝ որպես հավաստի աղբյուրների, և նրանցից քաղած ամբողջական հատվածներ զետեղել իր գրքի այս կամ այն մասերում:

Աշխատության Ա գրքի Ա—Գ գլուխների համար որպես աղբյուր ծառայել է Անանիա Շիրակացու «Ժամանակագրութիւնը», որը հրատարակվել է 1904 թ. Մխիթարյան միաբանության անդամ Բ. Սարգիսյանի կողմից «Անանուն ժամանակագրութիւն» վերնագրով²⁸:

²⁴ «Գիրք թղթոց», Թիֆլիս, 1901, էջ 194—195:

²⁵ Կաղանկատվացի, գիրք Բ, գլ. ԽԷ:

²⁶ Նույն տեղում, գիրք Բ, գլ. ԽԸ: Պատմական գրականության մեջ այն կարծիքը կա, որ Կաղանկատվացու օգտագործած գրավոր աղբյուրները VI դարից այն կողմ չեն անցնում: Այս թղթի (VIII դարի առաջին կես) գոյութիւնը թույլ է տալիս վերանայել այդ կարծիքը:

²⁷ Ստ. Օրբելյան, Պատմութիւն նահանգին Սիսական, Թիֆլիս, 1910, գլ. ԻԵ:

²⁸ Բ. Սարգիսյան, Անանուն ժամանակագրութիւն խմբագիր յօրինեալ յէ դարու, Վենետիկ, 1904: Ինչպես հրատարակիչը, այնպես էլ հետագա ուսումնասիրողները զտնում են, որ «Ժամանակագրութիւն» առաջին մասը բառ առ բառ վերցված է Խորենացուց, որը դժվար

«Անանուն ժամանակագրության» թեջ ասված է. «նոյ՝ եղեալ ամաց հինգհարիւր՝ ծնաւ երիս որդիս՝ ՎՍեմ, ՂՔամ և ՂՅաբեթ և յետ հարիւր ամի ծննդեանն Սեմայ՝ եկն ջրհեղեղն յամի վեցհարիւրերորդի կենացն նոյի, և կալաւ ղերկիր ամ մի։ Եւ առնին յԱդամայ մինչև ի ջրհեղեղն աղգք տասն. ամբ ՍՄԽԲ (2242)²⁹։

Կաղանկատվացին նույնությամբ արտագրում է այս տողերը. «Եւ նոյ եկեաց յամս հինգհարիւր և ծնաւ ղերիս որդիս՝ ՎՍեմ, ՂՔամ, ՂՅաբեթ։ Եւ յետ հարիւր ամի ծննդեանն Սեմայ եկն ջրհեղեղն յամի վեցհարիւրերորդի կենացն նոյի։ Եւ լինին յԱդամայ մինչև ցջրհեղեղն ամբ երկու հազար երկուհարիւր քառասուն և երկու և աղգք տասն»³⁰։ Բ գլխում Հաբեթի սահմանները նշելիս Կաղանկատվացին նորից դիմում է հիշյալ աղբյուրին, ուր մասնավորապես ասված է. «Եւ Յաբեթի՝ երկրորդի որդւոյն՝ ի մարաց մինչև ի Գադիրովն կողմն հիւսիսային։ Եւ Յաբեթի՝ զետն Դկղաթ, որ մեկնէ ընդ Մարս և ընդ Բաբելովն»³¹։ Նա ուղղակի դրսւմ է. «Սահմանք Յաբեթի այս են... ի Մարաց մինչև ցԳիգերովն»³² կողմն հիւսիսոյ և ղզետն Դկղաթ, որ մեկնէ ընդ Մարս և ընդ Բաբելովն»³³։

Փոխառությունների թիվը կարելի է ավելացնել, բայց խնայելով ժամանակն ու տեղը, անցնենք Ա գրքի հաջորդ գլխին։

«Անանուն ժամանակագրության» մեջ կարդում ենք. «Եւ այս աղգք են, որ գիտեն ի սոցանէ (Հաբեթի սերունդներին—Հ. Ս.) դպրութիւն։ Իբերացիք, Ղատինացիք՝ որով Հոռոմք վարին, Սպանիացիք, Յոյնք, Մարք, Հայք, որ են սահմանք նոցա ի Մարաց՝ ընդ կողմն հիւսիսոյ մինչև ի Գադիրովն...»³⁴։ Նույն տողերը հանդիպում են Կաղանկատվացու մոտ. «Եւ ի սոցանէ որք գիտեն ղդպրութիւն Եբրաեցիքն, Լատինացիք, որ և Հոռոմք վարին, Սպանացիք, Յոյնք, Մարք, Հայք, Աղվանք ի Մարաց կողմանէ հիւսիսոյ ցԳիգերովնա սահմանն...»³⁵։

Հի նկատել նաև սովորական համադրությամբ, և եթե չլիներ այն մասը, որ խոսվում է նոյի, որա որդիների և դպրություն ունեցող ազգերի մասին, կարելի էր ենթադրել, որ Կաղանկատվացին այս դրվանների համար ևս աղբյուր է ունեցել խորենացուն։ Չ. Դաուսեթը գտնում է, որ Կաղանկատվացու համար աղբյուր հանդիսացել է III դարի հռոմեացի հեղինակ Հիպպոլիտոսի «Ժամանակագրության» հայերեն թարգմանությունը, ելնելով Հիպպոլիտոսի և Շիրակացու մոտ եղած համապատասխան հատվածների նմանությունից (տե՛ս С. J. F. Dowsett, Իշվ. աշխ., էջ 1, ծան. I)։ Իրականում այդ նմանությունը երկրորդի համար առաջինի աղբյուր ծառայելու հետևանքն է (տե՛ս Բ. Ս ա ր գ ի ս յ ա ն, Անանուն ժամանակագրություն, Ներածություն, էջ Ե—ԼԶ)։ Г. Х а л а т ь я н ц, Армянские Аршакиды в „Истории Арменни“ Монсея Хоренского, ч. I, М., 1903, էջ 50—54, А. Г. А б р а а м я н, Г. Б. П е т р о с я н, Анания Ширакаци, Ереван, 1970, էջ 157։

29 Անանուն ժամանակագրություն», էջ 4։

30 Կ աղ ա ն կ ա տ վ ա գ ի, գիրք Ա, գլ. Ա։

31 «Անանուն ժամանակագրություն», էջ 4։

32 Ուղղելի է՝ «Գադիրովն», տե՛ս Մ ո Վ ս ե ս Կ աղ ա ն կ ա տ վ ա գ ի, Պատմություն Աղվանից աշխարհի, թարգմ. առաջ. և ծանոթ. վ. Առաքելյանի, Երևան, 1969, էջ 2։ Այս ուղղումով ավելի ակնառու է դառնում նմանությունը։

33 Կ աղ ա ն կ ա տ վ ա գ ի, գիրք Ա, գլ. Բ։

34 «Անանուն ժամանակագրություն», էջ 6։

35 Կ աղ ա ն կ ա տ վ ա գ ի, գիրք Ա, գլ. Գ։ Ինչպես տեսնում ենք Անանունի կամ, ավելի ճիշտ, նրա աղբյուրի՝ Հիպպոլիտոսի մոտ Աղվանքի մասին հիշատակություն չկա։ Այն, ըստ Էրևույթին, ավելացվել է կամ հեղինակի, կամ էլ հետագայում, գրիչների կողմից։

Մովսես Կաղանկատվացու կարևոր աղբյուրներից է նաև Մովսես Խո-րենացին, սակայն նրա երկի՝ որպես աղբյուրի քննարկումը կտրվի առան-ձին:

Հաջորդ հեղինակը, որից աղատորեն օգտվել է պատմիչը, Եղիշեն է: Նշենք միայն, որ Վարդանանց պատմության³⁶ Գ եղանակի 70—71, 74, 75—80 էջերը հար և նման են Կաղանկատվացու աշխատության Բ գլխին, իսկ զուգահեռ քննարկման համար հատվածաբար բերենք Եղիշեի Ը եղանակը և Կաղանկատվացու Ա գրքի Ժ գլուխը:

Եղիշե

Հասանէր վախճան կենաց թագա-ւորին (Յաղկերտի—Հ. Ս.) յիննևտաս-ներորդ ամի թագաւորութեանն իւրոյ: Եւ ընդ հակառակս ելեալ երկու որդիք նորա ի վերա տերութեանն կռուէին... Եւ մինչդեռ նորա յայնմ խռովութեանն էին ապստամբեաց և Աղուանից ար-քայն այն... լավ համարեցաւ մեռանել ի պատերազմի, քան ուրացութեամբ ու-նել զթագաւորութիւնն:

... Աղուանից արքայն... խրամա-տեաց զպահակն Ճորայ, և անցոյց յայս կոյս զզօրսն Մասքթաց. միաբանեաց զմօտասան թագաւորս զլեառնոր-դայսն, և ընդդեմ եկաց պատերազմաւ Արեաց զնդին, և բաղում վնաս արար զօրացն արքունի: ... Յղեաց առ նա... թագաւորն Պարսից. «Ջրոյրդ իմ, ասէ, և զքեռորդիդ ի բաց տուր ածել, զի ի բնէ մոգք էին և դու քրիստոնեայ արա-րեր, և աշխարհդ քեզ լիցի»: Իսկ ըս-քանչելի այրն ոչ ի տերութեանն վերայ կռուէր այլ յաստուածպաշտութեանն: Զմայրն և զկինն ետ տանել և զաշ-խարհն բովանդակ ի բաց եթող, և ին-քըն զաւետարանն առ և յաշխարհէն ի բաց կամէր գնալ:

Զայս իբրև լուաւ թագաւորն... ան-սուտ երդումն կնքէր և տայր տանել առ նա, եթէ յաշխարհեղ միայն մի գնար, և զինչ ասես առնէմ: Խնդրեաց զման-կութեան սեպհականն զօր հոր իւրոյ

Կաղանկատվացի

Յիննևտասներորդի ամի թագաւո-րութեանն Յաղկերտի հասանէ նմա վախճան մահու և ընդհակառակս լեալ երկու որդիքն նորա ի վերայ տերու-թեանն կռուեցան և մինչդեռ նոքա ի խռովութեան էին՝ ապստամբէ և Վաշէ արքայն Աղուանից³⁷... լավ համարե-ցաւ մեռանել պատերազմաւ քան ուրա-ցութեամբ ունիլ զթագաւորութիւն:

... Իսկ արքայն Աղուանից... խրա-մատեաց զպահակն Ճորայ, էանց այն-կոյս և անցոյց զզօրսն Մասքթաց ընդ իւր և զմետասան թագաւորս զլեառնոր-դեայս, ընդդեմ եկաց պատերազմաւ Արեաց զնդին և բաղում վնաս արար զօրացն արքունի:

... յղեաց առ Վաշէ թաղաւորն Պե-րոզ՝ «զքոյրդ իմ, ասէ, և զքեռորդիդ ի բաց տուր ածել, զի ի բնէ, մոգ էին և դու քրիստոնեայ արարէր, և աշխարհդ քո քեզ լիցի»:

Իսկ երանելի այրն ոչ թէ վերայ տէրութեանն կռուէր այլ յաստուած-պաշտութեանն մրցէր և ետ տանել ըզ-մայրն և զկին, և զաշխարհն բովան-դակ ի բաց եթող ինքն զաւետարանն առ և ի բաց կամէր գնալ: Զայն լուեալ թագաւորին Պերոզի անսուտ երդմունս կնքէր և տայր տանել առ նա, եթէ «յաշ-խարհեղ միայն մի գնար, և զոր ինչ ասես առնիմ: Իսկ սա հաճեցաւ միայն զսեպհականն առնուլ բաժին իւր զօր

³⁶ «Եղիշեի վասն Վարդանայ և հայոց պատերազմին»։ Ի լույս ածեալ բաղդատութեամբ ձևադրաց աշխատութեամբ Ե. Տիր-Մինասեան, Երևան, 1957 թ.։
³⁷ Եղիշեն թագավորի անունը չի նշում։

շնորհեալ էր նմա ի տղայութեանն հա- ի հօրէն էր առեալ հաղար երդ, առ
զար երդ. էառ զայն ի թագաւորէն, և զայն ի թագաւորէն և նստաւ ի նմա
նստաւ ի նմա միայնեկեցոք հանդերձ: միայնակեցոք հանդերձ: Եւ այնպէս
... և չիշեր ամենեկին, թե և թա- անդբաղապես կեայր ընդ Աստուծոյ և
գաւոր լեալ իցէ յառաջ: ոչ յիշեաց ամենեկմբ, եթէ թագաւոր
լեալ իցէ յառաջ:

Նշված երկու հեղինակների տեղեկությունների այսպիսի նմանությունը
այնքան ակնառու է, որ ուսումնասիրողների մեծ մասը, խոսելով Աղվանից
Վաչե թագավորի մասին, հղումներ է կատարում Եղիշեի և ոչ թե Կադանկատ-
վացու վրա:

«Աղվանից աշխարհի պատմության» հեղինակը քաջ ծանոթ է Ագաթան-
գեղոսի «Պատմությանը»: Վերջինս այն սակավաթիվ աղբյուրներից մեկն է,
որը նշվում է աշխատության մեջ: Պարսից Շապուհ Բ թագավորը մի խրախ-
ճանքի ժամանակ բռնակալի քմահաճությամբ ցանկանում է իմանալ «թե որ
ազգ և լեզու ունիցի բարձ և պատիւ»³⁸: Այդ ժամանակ «խորհուրդ բերեալ իշ-
խանացն հայոց մեծաց՝ մատուցին առաջի թագաւորին զԱգաթանգեղոյ Պատ-
մութիւն ցանկալի»³⁹: Բնականաբար, պետք էր սպասել, որ ծանոթ լինելով
նման «ցանկալի» գրքի, սեփական աշխատությունը զանազան կրոնական հրա-
շապատումներով լցնող հեղինակը չէր կարող չգայթակղվել և իր երկում չօգ-
տագործել այն: Եվ այդպես էլ տեսնում ենք:

Ագաթանգեղոսի աշխատության համառոտագրությունը կարելի է համա-
ռել Կադանկատվացու Ա գրքի ԺԴ գլուխը: Այս նույն գլխի համար Ագաթան-
գեղոսի հետ զուգընթաց օգտագործվել է Փափստոս Բուզանդի «Հայոց պատ-
մությունը»: Ամարասում եկեղեցի կառուցելու, մանուկ Գրիգորիսի սպանու-
թյան և Ամարասում թաղվելու մասին տեղեկությունները քաղված են վերջին
հեղինակի երրորդ դպրության վեցերորդ գլխից: Կադանկատվացու աշխատու-
թյան հիշյալ գլխում քաղվածքներ ենք նկատում նաև նույն դպրության եր-
րորդ, յոթերորդ և տասներկուերորդ գլուխներից: Միայն Բուզանդի մոտ հի-
շատակված մասքութների թագավոր Մանեսանը Կադանկատվացու մոտ դար-
ձել է Սանատրուկ: Այս երկու հեղինակների նմանության մասին այսպես է
արտահայտվում Չ. Դաուսեթը. «Մովսես Դասխուրանցու հաղորդումը մեծ մա-
սամբ համաձայնվում է Փափստոս Բուզանդի հետ, բայց իր մեջ պարունակում
է վարքագրական մանրամասնություններ այլ տեղերից»⁴⁰: Անգլիացի հայա-
գետի նշած այդ վարքագրական մանրամասնությունները պատմիչը անտա-
րակույս ավելացրել է «Վարք սրբոցից», որը նույնպես, ինչպես տեսանք, եղել
է նրա աղբյուրներից մեկը:

Մյուս հեղինակը, որ օգտագործվում է պատմության մեջ, բայց որի ա-
նունը չի տրվում, Սեբեոսն է: Աշխատության Բ գրքի ԺԷ գլխում հեղինակը
հայտնում է. «Բ ստոյգ և ի բուն պատմագրաց այսպես ծանէաք» և այնուհե-
տե շարադրում է պարսից աշխարհում տեղի ունեցող գահակալական կռիվ-
ները, երկպառակությունները՝ Բնդո և Վստամ եղբայրների ապստամբությու-

³⁸ Կ ա դ ա ն կ ա տ վ ա ջ ի, գիրք Բ, գլ. Ա:

³⁹ Նույն տեղում:

⁴⁰ C. J. F. Dowsett, նշվ. աշխ., էջ 23, ծանոթ. 1:

ներ, Վահրամ Չուբինի կողմից հալածվելն ու Մորիկ կայսեր մոտ հոսրով ար-
քայորդու հետ ապաստան գտնելը։ Նման պատմություններից հետո եզրակա-
ցությունը մեկը կարող է լինել։ Սերենսը Կաղանկատվացու համար ծառայել է
որպես աղբյուր։ Այս բանում համոզվենք նաև օրինակներով։

Սերենս ⁴¹	Կաղանկատվացի
Շինեալ (զհոսրով Անուշիրվան— Հ. Ս.) քաղաք և անուանեալ զնա վե՛ր Անշատոք հոսրով... Գլ. է	Նմանապէս և զճարտարս ի նոյն ձեռի օրինակի նստուցաներ և անուաներ զոմն առաւել քան զ Անտիոք քաղաք և զայլս յիւր անուն զառաւելն ի վերայ յաւելեալ։ Գիրք Բ, գլ. Ժ

... և զարաւարն նոցա անուանել Ռազմիողան որ է հոռեամ... ... Ժողովեաց խոռեամ զզարս իւր և երթեալ բանակեցաւ շուրջ Երուսաղե- մաւ և պաշարեաց զնա. ... առին զաւրքն Պարսից զԵրու- սագեմ և սուր ի գործ արարեալ մինչև ցերիս աւուրս՝ սպառեցին զամենայն մարդիկ քաղաքին և նստան ի ներքս քաղաքին և այրեցին զքաղաքն հուրբ։	... կացոյց ի վերայ զօրացն այն- միկ... որոյ բուն անուն իւր հոռեան կոչէր... ըստ խորագիտութեան Պարսից այլև այլ պճնող անուամբ յորջորջէ զնա՝ երբեմն Ռազմիողան, և երբեմն Շահ- վարազ։ Սա էառ և հրձիգ արար զմեծ քաղաքն Երուսաղեմ, և ի գերութիւն վա- րեաց զփայտն կենաց՝ զխաշն լուսա- տու տիեզերաց։ Գիրք Բ, գլ. Ժ
---	--

Կալան և զհայրապետն՝ յորում անունն էր Զաքարիա, և զխաչապանն, և ի խնդիր անկեալ կենսաբեր խաչին՝ սկսան զնոսա տանջել, ... ցուցին զտե- ղին՝ ուր ծածկեալ կայր զոր առեալ վարեցին ի գերութիւն. Գլ. ԻԴ	... դուռն պալատանն թողեալ ի ձեռս որդւոյն իւրոյ՝ թագ կապեալ նմա նստուցաներ (Հերակլ թագաւորը— Հ. Ս.) փոխանակ իւր յաթոռ թագաւորու- թեան։ Գիրք Բ, գլ. Ժ
---	--

Եւ արքայ հոսրով յայլակերպս ե- ղեալ՝ Լմուտ ի բուրաստանն արքունի և մտեալ ընդ թաւ ընդ ծաղկոցին ղաւղեալ զաղարկաց։ Գլ. ԻԷ	Եւ լեալ (հոսրով—Հ. Ս.) հետիոտն ընդ դուռն բուրաստանին, գնաց և թա- գեաւ ընդ ծառովք և կայր զօղեալ թա- փել ոգի նորա ի յանկարծ երկիւղեն... Գիրք Բ, գլ. ԺԳ
--	--

⁴¹ «Սերենսի Լպիսկոպոսի Պատմութիւն», Երևան, 1939։

Անառարկելի նմանություններ այս երկու հեղինակների մոտ երևում են նաև խոսքովի և նրա քառասուն որդիների սպանությունը նկարագրող հատվածներում:

Մյուս հեղինակը, որից օգտվել է մեր պատմիչը, VI դարի նշանավոր քերթողներից Պետրոս Սյունեցին է:

Այս հեղինակից Կաղանկատվացին (ինչպես և Ստ. Օրբելյանը) վերցրել է Սյունյաց Անդովկ իշխանի և նրա որդու՝ Բաբիկի զրույցը, որը «ժողովրդական ծագում ունի և առաջին անգամ է գրի առնված: Բայց գրի առնողը ոչ թե Մ. Կաղանկատվացին է, այլ Պետրոս քերթողը, որից առել է նա»⁴²:

* * *

Մովսես Կաղանկատվացու օգտագործած վերոհիշյալ աղբյուրների հայկական լինելը տարակուսանք չի առաջացնում: Աղվանից պատմիչը իր երկրի պատմությունը գրելու համար օգտագործել է բացառապես հայկական աղբյուրներ, նրանցից արտագրել ամբողջական հատվածներ:

Եզրակացությունը միակն է. միմիայն հայ պատմիչը կարող էր այդքան լայն չափով ու ազատորեն օգտագործել իր հայրենական գրականությունը: Մտածել, թե Կաղանկատվացին օգտվել է թարգմանական գրականությունից, ծիծաղելի կլիներ, որովհետև «եթե նա լիներ աղվան և գրեր աղվաներեն, ապա նրա աշխատության մեջ բազմաթիվ մեջբերումները՝ վերցված հայ հեղինակներից, պետք է թարգմանված լինեին կրկնակի անգամ (սկզբում հայերենից աղվաներեն, ապա՝ աղվաներենից հայերեն), հետևաբար շատ հեռու կլինեին բնագրից: Այնինչ նրանք իրականում բառ առ բառ համընկնում են հայկական տեքստերի հետ, չհաշված գրիչների թույլ տված չնչին տարբերությունները»⁴³:

Երկու կարծիք լինել չի կարող, Կաղանկատվացին հայ պատմիչ է և իր «Պատմությունը» հորինել է հայ պատմագիտության մեջ ընդունված կանոններով: «Ինչպես հայ պատմիչների, այնպես էլ նրա մոտ,— գրում է Կ. Վ. Տրեվերը,— առաջին երկու գրքերում ժամանակաշրջանը որոշվում է սասանյան թագավորների կամ բյուզանդական կայսրերի գահակալման, թագավորության կամ էլ մահվան տարեթվերով, երբեմն ցույց է տրվում որոշակի տարեթիվ ըստ հայկական թվականության կամ այս կամ այն իրադարձությունները ըստ քրիստոնեական օրացույցի, երբեմն ավելացվում է ամսվա (հայկական) անունը»⁴⁴: Չնայած Կ. Վ. Տրեվերի կարծիքով այս հանգամանքը հետևանք է այն բանի, որ «հավանաբար աղվանները չունեին իրենց թվականությունը»⁴⁵, սակայն իրողությունն այն է, որ Մովսես Կաղանկատվացին, իբրև հայ պատմիչ, իր պատմական աշխատությունը գրելիս պետք է պահպաներ հայ պատմագիտության մեջ ընդունված սկզբունքներն ու օրենքները: Իսկ քանի որ դա այդպես է, ապա «VII դարի պատմիչ Մ. Կաղանկատվացին... իր «Աղվանից աշխարհի պատմությունը» կարող էր գրել միմիայն հայ հին գրական լեզվով»⁴⁶, այսինքն գրաբարով:

⁴² Մ. Արեղյան, Երկեր, հատ. Գ, Երևան, 1968, էջ 443:

⁴³ Ас. Мнацаканян, П. Севак, По поводу книги З. Бунятова «Азербайджан в VII—IX вв.», «Պատմա-բանասիրական հանդես», 1967, № 1, էջ 182:

⁴⁴ К. В. Тревер, *изв.* *аշխ.*, էջ 315:

⁴⁵ *սույն տեղում*:

⁴⁶ С. Т. Еремян, Экономика и социальный строй Албании III—VII вв., «Очерки истории СССР III—IX вв.», М., 1958, էջ 305:

ИСТОЧНИКИ «ИСТОРИИ СТРАНЫ АЛБАНСКОЙ»
МОВСЕСА КАГАНКАТВАЦИ

Г. С. СВАЗЯН

(Резюме)

В статье затрагивается вопрос об источниках «Истории страны Албанской» Мовсеса Каганкатваци, что даст возможность выявить источники, использованные при создании труда, методы и язык его изложения. Выясняется, что для написания «Истории страны Албанской» Мовсес Каганкатваци располагал тем же кругом источников, которые были известны армянским средневековым писателям и летописцам.

В противовес антинаучным утверждениям, выдвинутым в последнее время некоторыми исследователями, подтверждается мнение, что Мовсес Каганкатваци являлся одним из армянских средневековых историков и свой труд мог написать только на армянском языке.